ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 55-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՆՕՐԻՆՎՈՂ ԳԱՂՏՆԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N 48-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական գաղտնիքի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կողմից տնօրինվող գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2024 թվականի մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կողմից տնօրինվող գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը հաստատելու մասին» N 48-Լ հրամանը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վահե Ղազարյան

«12» 07 **2024թ.**

ք. Երևան

Հավելված
Հայաստանի Հանրապետության ներքին
գործերի նախարարի 2024 թվականի
հուլիսի 12 -ի N 55 -Լ հրամանի

ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ՏՆՕՐԻՆՎՈՂ ԳԱՂՏՆԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/Հ	Գաղտնագրման ենթակա տեղեկությունների անվանումը	Գաղտնիության աստիճանը
1	2	3
	1. ՌԱԶՄԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
1	Ռազմական դրության ժամանակ զորքերի կիրառման օպերատիվ պլանները բացահայտող, ինչպես նաև նրանց գործողությունների շրջանակը բացահայտող	Հույժ գաղտնի
2	Զինված ուժերի և այլ զորքերի ռազմավարական, օպերատիվ և մարտավարական բնույթի պլանների և ծրագրերի, ըստ ռազմական գործողությունների ձևերի, զորքերի, ներառյալ աշխարհազորի և տարածքային պաշտպանության վերաբերյալ	Հույժ գաղտնի
3	Զորահավաքային ծրագրերի և պլաններեի վերաբերյալ	Հույժ գաղտնի
4	Զանգվածային անկարգությունների ժամանակ ձեռնարկվող կազմակերպչական միջոցառումների կամ այլ հատուկ նշանակության պլաններով նախատեսված միջոցառումների ժամանակ հասարակական կարգի և անվտանգության ապահովման վերաբերյալ	Գաղտնի
5	ՀՀ ՆԳՆ ՈԶ կիրառման օպերատիվ ծրագրերը բացահայտող, մարտական ղեկավարման փաստաթղթերը, տարբեր աստիճանների մարտական պատրաստականության բերելու վերաբերյալ	Հույժ գաղտնի
6	Պլանային կամ հաշվետու տվյալներ հրամանատարաշտաբային զորավարժությունների և շտաբային մարզումների վերաբերյալ	Գաղտնի
7	ՀՀ ՆԳՆ ՈԶ զարգացման հեռանկարային կամ տարեկան պլանները, այդ հարցերի վերաբերյալ զեկուցագրերը՝ նշելով անձնակազմի մարտական կազմը, հաստիքների քանակը և հիմնական սպառազինության ու ռազմական տեխնիկայի քանակը	Հույժ գաղտնի

8	Հայաստանի Հանրապետության տարածքի օպերատիվ սարքավորման (կահավորման), գործողությունների նախապատրաստման և վարման վերաբերյալ	Հույժ գաղտնի
9	Պաշտպանական շինարարական աշխատանքների հետ կապված բեռների տեղափոխման և ծախսերի վերաբերյալ	Գաղտնի
10	ՀՀ ՆԳՆ ՈՋ ծառայողամարտական գործունեության, մարտական ծառայության կատարման և վիճակի վերաբերյալ	Գաղտնի
11	Հասարակական կարգի պահպանության ժամանակ ՀՀ ՆԳՆ ՈՋ անձնակազմի ներգրավվման վերաբերյալ, ինչպես նաև հասարակական կարգի պահպանության ծառայության կազմակերպ-ման ուղղությամբ անցկացվող միջոցառումների վերաբերյալ	Գաղտնի
12	Զորքերի ծավալման (այդ թվում՝ զորահավաքային), նրանց մարտունակության, մարտական հերթապահության կրման ձևերի ու եղանակների վերաբերյալ	Հույժ գաղտնի
13	Մարտական խնդիրների կատարման ժամանակ ՀՀ ՆԳՆ ՈՋ և այլ գերատեսչությունների հետ համատեղ գործակցության կազմակերպման վերաբերյալ	Գաղտնի
14	ՀՀ ՆԳՆ ՈՋ զորամասերի կառավարման կետերի առկայության, տեղաբաշխման պատրաստության աստիճանի և պաշտպանվածության վերաբերյալ	Գաղտնի
15	Զինված ուժերի և այլ զորքերի ղեկավարման համակարգի փոխդասավորության, գործունեության հաջորդականության, համակարգի հասանելիության, ամբողջականության, համակողմանի ապահովման վերաբերյալ տեղեկությունը և գաղտնիության դեմ ուղղված սպառնալիքները չեզոքացնելու միջոցառումների վերաբերյալ	Հույժ գաղտնի
16	Ընդհանրացված տեղեկություններ կառավարման կետերի տեղակայման վայրերի և աշխատանքների կազմակերպման վերաբերյալ	Հույժ գաղտնի
17	Արտակարգ իրավիճակների ժամանակ ՀՀ ՆԳՆ ՈՋ գործողությունների վերաբերյալ	Գաղտնի
18	Զինված ուժերի, այլ զորքերի և քաղաքացիական պաշտպանության ուժերի զորահավաքի ծավալման, մարդկային և տրանսպորտային ռեսուրսների զորահավաքի անցկացման, զորահավաքի ծավալումը կառավարելու համակարգի և անձնակազմով համալրելու հնարավորությունների մասին, սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով և այլ նյութական, ֆինանսական միջոցներով, ինչպես նաև ռազմական փոխադրումներով ապահովելու վերաբերյալ	Հույժ գաղտնի

19	Զորահավաքի ժամանակ ՀՀ ՆԳՆ ստորաբաժանումներն անձնակազմով, տեխնիկայով, նյութական և ֆինանսական միջոցներով, զինվորական փոխադրումներով ապահովելու կարգի և ժամկետների վերաբերյալ	Գաղտնի
20	ՀՀ ՆԳՆ ոստիկանության զորքերի պահպանության ծախսերի ամփոփ նախահաշիվների վերաբերյալ տեղեկություններ	Գաղտնի
21	Տեղեկություններ և հայտեր ՀՀ ՆԳՆ ոստիկանության զորքերի պահպանության ծախսերի առանձին հոդվածների գծով դրամական միջոցների բաշխման, հատկացման և ծախսերի վերաբերյալ	Գաղտնի
22	Զենքի, ռազմամթերքի, օպերատիվ կապի միջոցների, հանդերձանքի, սննդի ձեռքբերման, ՀՀ ՆԳՆ պահպանության ծախսերի և տնտեսագիտական դասակարգման վերաբերյալ	Գաղտնի
23	ՀՀ ՆԳՆ ՈՋ զինծառայողների տարահանման, ապակենտրոնացման մասին	Գաղտնի
24	Սպառազինության համար ընդունված նոր զենքի կամ ռազմամթերքի արտադրական կամ կառուցվածքային թերությունների վերաբերյալ	Գաղտնի
25	Սպառազինության պատվերների ուղղությամբ արտադրական ծրագրերի և պատվերների կատարման վերաբերյալ	Գաղտնի
26	Սպառազինության և ռազմական տեխնիկան մշակելու, կառույցների, տեխնոլոգիայի, պատրաստման, գտնվելու վայրը, կիրառման կամ շահագործման ուղղությունները բացահայտող	Գաղտնի
27	ՀՀ ՆԳՆ սպառազինության և ռազմական տեխնիկայի տարեկան և հեռանկարային պատվերների, պատվերների մատակարարման վերաբերյալ տեղեկությունները	Հույժ գաղտնի
28	Զենքի և զինամթերքի քանակի, տրանսպորտային միջոցների և զրահատեխնիկայի քանակի վերաբերյալ	Հույժ գաղտնի
29	ՀՀ ՆԳՆ ոստիկանության զորքերի մարդաքանակական հաշվարկի վերաբերյալ	Գաղտնի
30	Հաստիքային փոփոխությունների վերաբերյալ	Գաղտնի
31	ՈՋ զարգացման թվի, մարտական կազմի կամ քանակի և նրանց մարտական պատրաստականության վերաբերյալ	Հույժ գաղտնի
32	ՀՀ ՆԳՆ ՈՋ օպերատիվ պատրաստականության վիճակի, նրանց գործունեության ապահովվածության, կազմի և զորքերի կառավարման համակարգի վերաբերյալ	Հույժ գաղտնի

33	ՀՀ ՆԳՆ ՈՋ զորամասերի տեղաբաշխումը բացահայտող, նրանց իրական անվանումների, կազմակերպչական կառուցվածքի, սպառազինության և թվաքանակի վերաբերյալ	Հույժ գաղտնի
34	Պատմական տեղեկամատյանում տեղ գտած ընդհանրացված տվյալները	Գաղտնի
35	Զինված ուժերի, այլ զորքերի, քաղաքացիական պաշտպանության ուժերի տեղաբաշխումը, իրական անվանումները, կազմակերպչական կառուցվածքը, սպառազինությունը, ապահովման և մարտունակության վիճակը, անձնակազմի, տրանսպորտային միջոցների, տեխնիկական այլ միջոցների, նյութական միջոցների (վառելիքաքսուկային և այլ միջոցներ) թվաքանակը բացահայտող տեղեկությունները, բացառությամբ, երբ նշված տեղեկությունները ենթակա են հրապարակման՝ ՀՀ միջազգային պարտավորությունների համաձայն	Գաղտնի
36	Հասարակական կարգի պահպանման ծառայության նյութատեխնիկական ապահովման վերաբերյալ	Գաղտնի
37	Անհատական պաշտպանության միջոցների բաշխման վերաբերյալ	Գաղտնի
38	ՀՀ Պաշտպանության, Ներքին գործերի, Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների և ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ինչպես նաև վերջիններիս կառավարման տակ գտնվող կազմակերպությունների տրանսպորտային միջոցների քանակի ու ռազմատրանսպորտային պարտականություն ունեցող մարմինների տրանսպորտային միջոցների վերաբերյալ	Գաղտնի
39	ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումներում հատուկ միջոցների առկայության, դրանց տեսակի և քանակի վերաբերյալ	Գաղտնի
40	ՀՀ ՆԳՆ սպառազինության, ռազմական տեխնիկայի և նյութական միջոցների պահանջարկի և առկա քանակի վերաբերյալ	Հույժ գաղտնի
41	ՀՀ ՆԳՆ կառուցվածքային ստորաբաժանումներում, ոստիկանությունում, փրկարար ծառայությունում և դրանց ենթակա կառուցվածքային ստորաբաժանումներում (բացի այն օբյեկտներից, որտեղ պահվում են կրակային պատրաստության, ուսումնական և սպորտային նպատակներով) առկա զենքի, ռազմական տեխնիկայի, ռազմամթերքի և ռազմական նշանակության այլ նյութատեխնիկական միջոցների առկայության, քանակի, որակի և վիճակի վերաբերյալ	Գաղտնի
42	Զանգվածային անկարգությունների և զանգվածային միջոցառումների անցկացման, ինչպես նաև պարեկապահակետային ծառայության ընդհանուր ուժերի և միջոցների տեղաբաշխման և տեղադիրների (միասնական տեղադիրներ) վերաբերյալ	Գաղտնի

43	Ռազմական դրության ժամանակ ՀՀ ՆԳՆ ոստիկանության զորքերի զինծառայողների գործուղման վերաբերյալ	Գաղտնի
44	Միասնական տեղաբաշխման համակարգում ՀՀ ՆԳՆ ոստիկանության ուժերի և միջոցների դասավորման վերաբերյալ	Գաղտնի
45	Հայաստանի Հանրապետության պաշտպանության և անվտանգության ապահովմանն ուղղված հեռահաղորդակցության համակարգի և ցանցերի վերաբերյալ	Հույժ գաղտնի
46	Կապի բոլոր տեսակների կազմակերպման, ապահովման վերաբերյալ (այդ թվում պլաններ), որոնցում նշվում են զորամասերը, կառավարման կետերն իրական պայմանական անվանումներով և տեղաբաշխման վայրերով	Հույժ գաղտնի
47	Կապի գործող հանգույցների և կաբելային օղակների վերաբերյալ	Հույժ գաղտնի
48	Հաշվետու տեղեկություններ կապի վիճակի վերաբերյալ	Գաղտնի
49	Ռադիոտվյալների (ռադիոցանցի և ռադիոուղղությունների) վերաբերյալ՝ նշելով շտաբների, զորամասերի իրական անվանումները	Գաղտնի
50	Զինված ուժերը, այլ զորքերը և քաղաքացիական պաշտպանության ուժերը բոլոր տեսակի կապերով (ռադիոլոկացիոն, ռադիո-տեխնիկական) ապահովման կազմակերպումը կամ գործելը բացահայտող	Գաղտնի
51	(Սխեմաներով և նկարագրություններով, աշխարհագրական կորդինատներ պարունակող) գործող և պահեստային կապի հանգույցների, ինչպես նաև ռադիո-ռելեային օղակների վերաբերյալ	Գաղտնի
52	ՀՀ ներքին գործերի նախարարությունում ռադիոկապային կայանների քանակի մասին՝ նրանց տեխնիկական առանձնահատկությունների նշումով տեղեկությունները	Գաղտնի
53	ՀՀ ներքին գործերի նախարարությունում ռադիոկայանների հաճախականության կամ ազդականչի (ազդակոչի) բաշխման, օգտագործման վերաբերյալ	Գաղտնի
54	ՀՀ ներքին գործերի նախարարության ուղիղ կապի ուղիների վերաբերյալ	Գաղտնի
55	ՀՀ ներքին գործերի նախարարությունում ռադիոէլեկտրոնային միջոցների ռադիո-հաճախականության և էլեկտրոմագնիսային համատեղելիության ապահովման ուղղությամբ, ռադիո և ռադիո-տեխնիկական հսկողության վերաբերյալ	Գաղտնի
56	Ռադիո և ռադիոտեխնիկական հսկողության կայանների (կետերի) տեղաբաշխման աշխատանքի մեթոդների և տակտիկայի վերաբերյալ	Գաղտնի

57	Ռադիո և ռադիո-տեխնիկական հսկողության կայանների (կետերի) փոխգործունեության հարցերի ուղղությամբ ՀՀ Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության, Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի և Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ու Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների համապատասխան ստորաբաժանումների հետ համագործակցության վերաբերյալ	Գաղտնի
58	Կապի բոլոր տեսակների կազմակերպման, ապահովման մասին (այդ թվում պլաններ), որոնցում նշվում են զորամասերը, կառավարման կետերն իրական պայմանական անվանումներով և տեղաբաշխման վայրով	Հույժ գաղտնի
59	Կապի գործող հանգույցների և կաբելային օղակների վերաբերյալ	Հույժ գաղտնի
60	Հաշվետու տեղեկություններ կապի վիճակի վերաբերյալ	Գաղտնի
61	Ռադիոտվյալների (ռադիոցանցի և ռադիոուղղությունների) մասին՝ նշելով շտաբների, զորամասերի իրական անվանումները	Գաղտնի
62	Հատուկ և կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանության իրականացման կազմակերպման կարգի վերաբերյալ	Գաղտնի
63	Հատուկ պահպանվող և մուտքի ու ելքի հատուկ կարգ ունեցող օբյեկտների տեղաբաշխման, նշանակության, պաշտպանվածության ու պատրաստականության աստիճանի, դրանց նախագծման և շինարարության, ինչպես նաև այդ օբյեկտների համար տարածքներ հատկացնելու վերաբերյալ	Գաղտնի
64	Հատուկ կարևոր, հատուկ ռեժիմային և ռեժիմային օբյեկտների հետազոտության, նախագծման կամ շինարարության ուղղությամբ անցկացվող կամ պլանավորվող շենքերի վերաբերյալ	Հույժ գաղտնի
65	Ըստ ոլորտների հրապարակման ոչ ենթակա արտադրական վտանգավոր օբյեկտների ցանկի վերաբերյալ	Գաղտնի
66	Ռազմական դրության ժամանակ բնակչության պաշտպանվածության աստիճանի վերաբերյալ	Գաղտնի
67	ՀՀ կառավարության հաստատած ցանկով ՀՀ ՆԳՆ ՈՋ կարիքների համար իրականացված գնումների վերաբերյալ	Գաղտնի
68	ՀՀ կառավարության հաստատած ցանկով զինված ուժերի կարիքների համար իրականացված գնումների (գնման պլան, գնման հայտ, տեխնիկական բնութագիր, գնումների կազմակերպման գործընթաց, մատակարարում իրականացրած կամ ծառայություն մատուցած կամ աշխատանկ կատարած կազմակերպություն) վերաբերյալ	Գաղտնի

2. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ		
69	Հնարավոր (կանխատեսելի) իրադրությունում հակառակորդի հետ պատերազմի վարման վերաբերյալ	Հույժ գաղտնի
70	Նյութական՝ պետական, զորահավաքային և ռազմավարական պահուստների կառուցվածքի և փաստացի չափի վերաբերյալ	Հույժ գաղտնի
71	ՀՀ պետական պահուստի նյութական արժեքների անվանացանկ՝ ծավալի, կուտակման նորմերի վերաբերյալ	Գաղտնի
72	Նյութական՝ պետական, զորահավաքային և ռազմավարական պահուստների տեղաբաշխման վերաբերյալ	Գաղտնի
73	ՀՀ պետական պահուստի նյութական արժեքների պատասխանատու պահպանումն իրականացնող կազմակերպությունների ցանկի վերաբերյալ	Գաղտնի
74	Հայաստանի Հանրապետությունը հնարավոր զինված հարձակումներից պաշտպանելու վերաբերյալ նախապատրաստական ծրագրերի բովանդակության, ռազմամթերքի և ռազմական տեխնիկայի արտադրության, նորոգման գծով արդյունաբերական մոբիլիզացիոն կարողությունների, ռազմական հումքի ու նյութերի պահեստավորման և մատակարարումների ծավալի վերաբերյալ	Հույժ գաղտնի
75	ՀՀ պետական պահուստի պաշարների ոլորտի ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ	Գաղտնի
76	ՀՀ ՆԳՆ պետական ռեզերվների գրասենյակի պահպանումն իրականացնող կազմակերպությունների պահեստային ծավալների, մակերեսների, տարողությունների և դրանց օգտագործման վերաբերյալ	Գաղտնի
77	Ներմուծող կազմակերպությունների կողմից կուտակվող և մշտապես պահպանվող, ռազմավարական նշանակություն ունեցող նյութական արժեքների պահուստի (ռազմավարական պաշարների պահուստ) ամփոփ հաշվետվությունների վերաբերյալ	Գաղտնի
78	Հայաստանի Հանրապետության պաշտպանության և ազգային անվտանգության ապահովման նպատակով ենթակառուցվածքների օգտագործման վերաբերյալ	Գաղտնի
79	Պաշտպանական կամ տնտեսական կարևոր նշանակություն ունեցող գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների մասին տեղեկությունները	Գաղտնի
80	Ամփոփ տվյալներ բնակչության և կազմակերպությունների աշխատողների պատսպարման վերաբերյալ	Գաղտնի

81	Քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների, վարչական շենքերի պաշտպանվածության ու բնակչության անվտանգության ապահովվածության աստիճանի, տարահանման երթուղիների և տեղաբաշխման վայրերի ու դրանց հնարավորությունների վերաբերյալ	Գաղտնի
82	Քաղաքացիական պաշտպանության պաշտպանողական շինությունների շինարարության վերաբերյալ տեղեկությունները	Գաղտնի
83	Ռազմական դրության ժամանակ ՀՀ մարզերի բնակչության տարահանման պլանը	Գաղտնի
84	Հանրապետական, պետական, պետական կառավարման համակարգի մարմինների և նրանց առանձնացված ստորաբաժանումների, ՀՀ մարզերի, Երևան քաղաքի, ինչպես նաև հանրապետական, մարզային, Երևան քաղաքի քաղաքացիական պաշտպանության ծառայությունների քաղաքացիական պաշտպանության պլանները	Գաղտնի
85	Հայաստանի Հանրապետության պետական, զորահավաքային, ռազմավարական պաշարների պահուստի, դրա ֆինանսների և բյուջետային քաղաքականության (բացի տնտեսության և ֆինանսների ընդհանուր վիճակը բնութագրող ամփոփ ցուցանիշներից) վերաբերյալ	Հույժ գաղտնի
86	Նյութական ռեսուրսների պետական պահուստի ձևավորման ծախսերի ֆինանսավորման ծավալի վերաբերյալ	Հույժ գաղտնի
87	ՀՀ ներքին գործերի նախարարության զորահավաքային ծրագրերի պաշտպանության բնագավառի պլանների, դրանցում ընդգրկված ուժերի և միջոցների, իրականացման վերաբերյալ	Հույժ գաղտնի
88	Տնտեսության զորահավաքային ծրագրերի և պլանների վերաբերյալ	Հույժ գաղտնի
89	Պետության պաշտպանության և անվտանգության նպատակով կամ տնտեսական կարևոր նշանակություն ունեցող գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական կամ նախագծային աշխատանքների բովանդակությունը և ուղղվածությունը բացահայտող	Գաղտնի
90	Պետության պաշտպանության և անվտանգության նպատակով իրականացվող հիդրոօդերևութաբանության և երկրաֆիզիկայի բնագավառում աշխատանքների, ինչպես նաև հատուկ երկրաբանաերկրաֆիզիկական հետազոտությունների արդյունքները բացահայտող	Գաղտնի
91	Ընդհանուր օգտագործման, ռազմավարական նշանակության հումքերի, նյութերի, դրանց ստեղծման, արտադրության և զարգացման, զորահավաքային հզորությունների վերաբերյալ	Գաղտնի

92	Ռազմական փոխադրումների ծավալները և սպառազինության ու ռազմական տեխնիկայի փոխադրման երթուղիները, տրանսպորտային միջոցների վիճակը, սարքավորումները, ռազմական նպատակի համար տրանսպորտային ցանցերի նախապատրաստումը բացահայտող	Հույժ գաղտնի
93	Տրանսպորտային միջոցների զորահավաքային պահանջարկը, այդ թվում՝ տրանսպորտի առանձին տեսակների և դրանցով զորահավաքային ապահովվածությունը բացահայտող	Գաղտնի
94	Ռազմավարական նշանակություն ունեցող արդյունաբերական օբյեկտների տեխնիկական, ինչպես նաև քաղաքների ու խոշոր բնակավայրերի խմելու և կենցաղային ջրամատակարարման համար օգտագործվող ջրաղբյուրների (հորատանցք, բնաղբյուր) տեղադիրքի և այլ բացահայտումների վերաբերյալ	Գաղտնի
95	Միջուկային տեղակայանքների, միջուկային նյութերի ֆիզիկական պաշտպանության նախագծային սպառնալիքը, ֆիզիկական պաշտպանության ինժեներատեխնիկական կառույցների շահագործման կարգը բացահայտող	Գաղտնի
96	Միջուկային տեղակայանքների, միջուկային նյութերի հատուկ կարևորագույն օբյեկտների ֆիզիկական պաշտպանության կազմակերպման և իրականացման կարգի վերաբերյալ	Գաղտնի
97	Միջուկային նյութերի և 1-ին ու 2-րդ դասի ռադիոակտիվ նյութերի ներմուծման, արտահանման, փոխադրման միջոցները, օրը և ժամը բացահայտող	Գաղտնի
98	Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության և անվտանգության ապահովման նպատակով տիեզերական տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների կիրառման և զարգացման հեռանկարների վերաբերյալ	Գաղտնի
3. ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ, ՀԱԿԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ, ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ		
99	Օպերատիվ-հետախուզական գործունեության ուժերի, միջոցների, աղբյուրների, մեթոդների, պլանների և արդյունքների, ինչպես նաև այդ գործունեության ֆինանսավորման մասին տվյալները, եթե դրանք բացահայտում են թվարկված տեղեկությունները	Հույժ գաղտնի
100	Ինտերպոլի գլխավոր քարտուղարությունից և Կազմակերպության անդամ երկրների Ազգային Կենտրոնական Բյուրոներից ստացվող օպերատիվ-հետախուզական բնույթի տեղեկություններ անձանց և Ինտերպոլի գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ	Գաղտնի

101	ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության աշխատակիցների կողմից հանցագործությունների կամ այլ փնտրվող անձանց բացահայտմանն օժանդակելու վերաբերյալ	Գաղտնի
102	ՀՀ ներքին գործերի նախարարություն ծառայության ընդունվող անձանց վերաբերյալ ստուգումների նյութերի վերաբերյալ	Գաղտնի
103	ՀՀ ՆԳՆ ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումների անձնակազմի ցուցակային կամ հաստիքային թվաքանակի, հաստիքներում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու և պաշտոնների անվանացանկի վերաբերյալ	Գաղտնի
104	Հատուկ օպերատիվ ծախսերի հատկացումների և հաշվետվությունների վերաբերյալ	Հույժ գաղտնի
105	Հետախուզվողին ՀՀ տեղափոխելու ընթացքում կատարված ծախսերի, գործուղվող աշխատակիցների և հետախուզվողի վերաբերյալ	Գաղտնի
106	Ծառայողների անձնական տվյալների վերաբերյալ	Գաղտնի
107	Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ուժերի, միջոցների ու աղբյուրների, մեթոդների, պլանների, այդ միջոցառումների արդյունքների, դրանց ֆինանսավորման, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցների, ինչպես նաև այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող և համագործակցած անձանց վերաբերյալ	Հույժ գաղտնի
108	ՀՀ ՆԳՆ ոստիկանության օպերատիվ փնտրողական վարչության հաստիքացուցակի և կառուցվածքի վերաբերյալ	Գաղտնի
109	ՀՀ ՆԳՆ ոստիկանության օպերատիվ փնտրողական վարչության տեղակայումն ու գործունեությունը բացահայտող այլ տվյալների վերաբերյալ	Հույժ գաղտնի
110	ՀՀ ՆԳՆ ոստիկանության և ազգային անվտանգության ծառայության կողմից իրականացվող հատուկ միջոցառումների անցկացման և արդյունքների վերաբերյալ	Հույժ գաղտնի
111	Օդանավերի հափշտակման, դիվերսիայի նախազգուշացման կամ կանխարգելման ուղղությամբ ՀՀ ՆԳՆ ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, պաշտպանության նախարարության և քաղաքացիական ավիացիայի կոմիտեի ստորաբաժանումների ուժերի և միջոցների համագործակցության մասին	Գաղտնի

112	Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օգտագործվող հատուկ տեխնիկական միջոցների վերաբերյալ	Հույժ գաղտնի
113	Հետախուզական, արտաքին հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող կամ համագործակցած անձանց մասին տեղեկությունները	Հույժ գաղտնի
114	Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց պաշտպանության ուժերի, միջոցների, աղբյուրների, մեթոդների, պլանների և արդյունքների, ինչպես նաև այդ գործունեության ֆինանսավորման մասին տվյալները, եթե դրանք բացահայտում են թվարկված տեղեկությունները	Գաղտնի
115	Տեղեկատվական անվտանգության կազմակերպման ու կառավարման համակարգի (այսուհետ՝ ՏԱԿՀ) քաղաքականության, ռիսկերի գնահատման մոտեցումների և դիմագրավման տարբերակների, տեղեկատվական համակարգերի մշակման, ներդրման և պահպանման, ռեսուրսների ու ակտիվների կառավարման, տեղեկատվական անվտանգության միջադեպերի հսկողության վերաբերյալ	Գաղտնի
116	Լուծման ենթակա ծրագրերի կամ խնդիրների ցանցի, ինչպես նաև ծրագրային ապահովման կառուցվածքի վերաբերյալ	Հույժ գաղտնի
117	Տվյալների փոխանցման համակարգում օգտագործվող սարքավորումների, հաճախականությունների և կառուցվածքի վերաբերյալ	Գաղտնի
118	Կառավարական և այլ տեսակի հատուկ կապի համակարգի, ծածկագրերի մշակման, դրանց պատրաստման և ապահովման, ծածկագրային և հատուկ պաշտպանության միջոցների վերլուծության մեթոդների, հատուկ նշանակության տեղեկատվական վերլուծական համակարգերի, հատուկ նշանակության համակարգչային ցանցերի և տեղեկատվական ենթակառուցվածքների սխեմաների, ինչպես նաև տեղեկատվական համակարգերի հարձակումներից պաշտպանության վերաբերյալ	Հույժ գաղտնի
119	ՀՀ ներքին գործերի նախարարությունում գաղտնիացվող կապի սարքավորումների առկայության կամ օգտագործման մասին, ինչպես նաև գաղտնիացված կապի հանգույցների ստեղծման կամ զարգացման վերաբերյալ	Հույժ գաղտնի

120	Լուծման ենթակա ծրագրերի կամ խնդիրների ցանցը, ինչպես նաև ծրագրային ապահովման կառուցվածքը	Հույժ գաղտնի
121	Տվյալների փոխանցման համակարգում օգտագործվող սարքավորումների, հաճախականությունների և կառուցվածքի վերաբերյալ	Գաղտնի
122	Ծածկագրային սարքավորումների ծածկագրման բլոկները ծածկագրող սխեմաների մասին տեղեկություններ պարունակող ծածկագրային սարքավորումների բլոկների հանգույցները ծածկագրող սխեմաների մասին տեղեկություններ չպարունակող ծածկագրային սարքավորումների բլոկների հանգույցները ծածկագրման բլոկները՝ առանց ծածկագրային տվյալների	Հույժ գաղտնի Հույժ գաղտնի Գաղտնի Գաղտնի
123	Ծածկագրային սարքավորումները՝ առանց ծածկագրման բլոկների	Գաղտնի
124	Գաղտնի կապի առավելագույնը «գաղտնի» տեղեկատվության գաղտնագրման միջոցները (փաստաթղթերը)	Գաղտնի
125	Ավտոնոմ հատուկ պաշտպանության հանգույցները	Գաղտնի
126	Գաղտնի կապի առավելագույնը «գաղտնի» տեղեկատվության գաղտնագրման միջոցների (փաստաթղթերի) երկարաժամկետ բաղադրիչները (բաղադրամասերը)	Գաղտնի
127	Ծածկագրերի նկարագիրը կամ դրանց օգտագործման կանոնները, ինչպես նաև ծածկագրող տարրեր կամ դրանց ստացման մասին տեղեկություններ պարունակող ծածկագրերի մշակման կամ դրանց պատրաստման եղանակները բացահայտող տեխնիկական փաստաթղթերը ծածկագրող տարրեր կամ նրանց ստացման մասին տեղեկություններ չպարունակող նույն փաստաթղթերը	Հույժ գաղտնի Գաղտնի
128	Ծածկագրման բլոկների կրիպտոսխեմաների վերականգնման տեղեկություններ պարունակող ծածկագրային սարքավորումների փաստաթղթերը սույն հավելվածի 129-րդ կետում նշված տեղեկությունները չպարունակող նույն փաստաթղթերի վերաբերյալ առավելագույնը «գաղտնի» տեղեկատվության գաղտնագրման սարքավորումների փաստաթղթերի վերաբերյալ	Հույժ գաղտնի Գաղտնի Գաղտնի
129	Առավելագույնը «գաղտնի» տեղեկատվության գաղտնագրման միջոցների (փաստաթղթերի) օգտագործման կանոնների, նրանց մշակման կամ պատրաստման տեխնիկական փաստաթղթերի վերաբերյալ առավելագույնը «գաղտնի» տեղեկատվության գաղտնագրման փաստաթղթերի մշակման եղանակների հրահանգների վերաբերյալ	Գաղտնի Գաղտնի

130	Վթարային ծածկագրային և կապի վերականգնման համակարգերի ծածկագրերի օգտագործման կանոնները և հրահանգները	Գաղտնի
131	Ծածկագրային սարքավորումների բանալիավոր փաստաթղթերը կամ միջոցները, որոնք նախատեսված են օգտագործել հույժ գաղտնի տեղեկատվության մշակման համար գաղտնի տեղեկատվության մշակման համար նախատեսված՝ սույն հավելվածի 131-րդ կետում նշված փաստաթղթերը ոչ գաղտնի տեղեկատվության մշակման համար նախատեսված՝ սույն հավելվածի 131-րդ կետում նշված փաստաթղթերը	Հատուկ կարևորության Հույժ գաղտնի Գաղտնի
132	Բանալիավոր տեղեկություններ պարունակող ծածկագրային սարքավորումների հանգույցների և առանձին մասերի վերաբերյալ առավելագույնը «գաղտնի» տեղեկատվության գաղտնագրային սարքավորումների 132-րդ կետում նշված հանգույցների վերաբերյալ	Հույժ գաղտնի Գաղտնի
133	Ծածկագրային սարքավորումների ստուգողական բանալիավոր տեղի մասին	Գաղտնի
134	Գաղտնի տեղեկությունների մշակման համար նախատեսված առավելագույնը «գաղտնի» տեղեկատվության գաղտնագրման միջոցների (փաստաթղթերի) բանալիավոր միջոցների վերաբերյալ ոչ գաղտնի տեղեկությունների մշակման համար նախատեսված սույն հավելվածի 134-րդ կետում նշված միջոցների (փաստաթղթերի) վերաբերյալ	Հույժ գաղտնի Գաղտնի
135	Գաղտնագրերի քողարկման կարգի (կառուցվածքի) վերաբերյալ	Գաղտնի
136	Ծածկագրերի, ծածկագրային սարքավորումների, տեխնիկական և բանալիավոր փաստաթղթերի կորստին, դրանց բացահայտմանը կամ անվանարկման կասկածների դեպքերին վերաբերող, ինչպես նաև օգտագործման կանոնների կամ հրահանգների խախտման դեպքերում, ծածկագրերը բացահայտող տեղեկատվություններ. ծածկագրերը չբացահայտող՝ սույն հավելվածի 136-րդ կետում նշված տեղեկությունները	Գաղտնի Գաղտնի
137	Ծածկագրային սարքավորումների կառուցվածքի վերաբերյալ, ինչը հնարավորություն է տալիս որոշել տվյալ սարքավորումը և դրա տեխնիկական փաստաթղթերը	Գաղտնի
138	ՀՀ ներքին գործերի նախարարության կենտրոնական ծածկագրային ծառայությունում առկա, սպառված և հայտագրված ծածկագրերի վերաբերյալ առանձին ծածկագրային ծառայության՝ սույն հավելվածի 139-րդ կետում նշված տեղեկությունների վերաբերյալ	Հույժ գաղտնի Գաղտնի

139	Ծածկագրերի պահպանության համար նախատեսված մետաղյա և չհրկիզվող պահարանների, զետեղարանների հատուկ պաշտպանվածություն ունեցող գաղտնագրային փականների և նրանց բանալիների վերաբերյալ	Գաղտնի
140	Ծածկագրային աշխատանքների վիճակի, ծածկագրերի, ծածկագրային սարքավորումների, բանալիավոր փաստաթղթերի և միջոցների, ինչպես նաև գործող ծածկագրերի վերաբերյալ ընդհանրացված տեղեկատվությունները	Հույժ գաղտնի
141	Ծածկագրային, գաղտնագրային կապի վիճակը բացահայտող տեղեկությունները	Հույժ գաղտնի
142	Առավելագույնը «գաղտնի» տեղեկատվության գաղտնագրման կապի վիճակը բացահայտող տեղեկությունները	Գաղտնի
143	Գործող ծածկագրերում, ծածկագրային սարքավորումների կրիպտոսխեմաներում կատարված փոփոխությունների և լրացումների վերաբերյալ առավելագույնը «գաղտնի» տեղեկատվության գաղտնագրման սարքավորումներում կամ գործող ծածկագրերում ծածկագրող բլոկների կրիպտոսխեմաների կապ չունեցող, սույն հավելվածի 144-րդ կետում նշված տեղեկությունները	Հույժ գաղտնի Գաղտնի
144	Ծածկագրերի դերի, նրանց գործունեության մեջ դնելու և հանելու վերաբերյալ	Գաղտնի
145	Ծածկագրային սարքավորումների տակտիկա-տեխնիկական բնութագրման վերաբերյալ	Գաղտնի
146	Ծածկագրային կապի կազմակերպման վարման և անվտանգության ապահովման, ինչպես նաև նրա անվտանգությունը ապահովող ղեկավար փաստաթղթերի (հրահանգները, դրույթները, ձեռնարկները) վերաբերյալ նույն փաստաթղթերի վերաբերյալ՝ առավելագույնը «գաղտնի» տեղեկատվության գաղտնագրման կապի համար	Հույժ գաղտնի Գաղտնի
147	Ծածկագրային կապի կազմակերպման, վարման և անվտանգության ապահովման այն ղեկավար փաստաթղթերը (հրամանները, կոլեգիայի որոշումները, դրույթները, ամփոփումները և այլն), որոնք չեն պարունակում 141-րդ կետում նշված տեղեկությունները. նույն ղեկավար փաստաթղթերի վերաբերյալ՝ առավելագույնը «գաղտնի» տեղեկատվության գաղտնագրման կապի համար	Գաղտնի Գաղտնի
148	Ծածկագրային ծառայությունների իրական, պայմանական անվանումները, դրանց տեղաբաշխման կետերը, ինչպես նաև այդ ծառայություններում կատարվող ծածկագրերի հաշվառման և ծածկագրային ծառայությունների վերաբերյալ	Հույժ գաղտնի

149	Ծածկագրային սարքավորումներին կամ դրանց օժանդակ տեխնիկական միջոցներին ներկայացվող պահանջների և հատուկ պաշտպանվածության նորմերի վերաբերյալ	Հույժ գաղտնի
150	Գաղտնի տեղեկությունների արտահոսքից պաշտպանված տեխնիկական միջոցների կամ նրանց պաշտպանվածության կառուցվածքի վերաբերյալ	Գաղտնի
151	Բանալիավոր փաստաթղթերի և միջոցների կամ բանալիների մասին տեղեկություններ պարունակող ծածկագրային սարքավորումների կամ առանձին հանգույցների, փաթեթների, ինչպես նաև նրանց փաթեթավորման տարրերի վերաբերյալ	Գաղտնի
152	Բանալիավոր փաստաթղթերի և միջոցների կամ բանալիների մասին տեղեկություններ պարունակող ծածկագրային սարքավորումների կամ առանձին հանգույցների, փաթեթների բացման կարգը բացահայտող տեղեկությունների վերաբերյալ	Գաղտնի
153	Գոյություն ունեցող ծածկագրային սարքավորումների ոչ կրիպտոգրաֆիկ բնութագրում մտցվող գյուտարարությունների կամ ռացիոնալ առաջարկությունների վերաբերյալ	Գաղտնի
154	Ծածկագրային սարքավորումների առանձին հանգույցների և բլոկների ծածկագրային սխեմաներում պարունակվող տեղեկությունները բացահայտող գծագրային կամ ֆոտոգծագրային նկարագրերի վերաբերյալ. ծածկագրային սարքավորումների ծածկագրային սխեմաներում պարունակվող տեղեկությունները չբացահայտող կամ առավելագույնը «գաղտնի» տեղեկատվության գաղտնագրման սարքավորումների ծածկագրային սխեմաներում պարունակվող տեղեկությունները բացահայտող գծագրական կամ ֆոտոգծագրական նկարագրերի վերաբերյալ	Հույժ գաղտնի Գաղտնի
155	Արդյունաբերությունում պատվիրած ծածկագրային սարքավորումների պատվիրատուի վերաբերյալ	Գաղտնի
156	Ծածկագրային ծառայությունների ծածկագրային կամ առավելագույնը «գաղտնի» տեղեկատվության գաղտնագրման կապի վիճակի ուսումնասիրման վերաբերյալ հատուկ կապի կազմակերպման, նրա անվտանգության ապահովման ժամանակ տեղ գտած թերություններ և ծածկագրերի օգտագործման կանոնների խախտումներ չպարունակող 157-րդ կետում նշված տեղեկությունները	Հույժ գաղտնի Գաղտնի
157	Ծածկագրային ծառայությունների գործունեության կազմակերպման (այդ թվում նաև նրանց բացման և գործունեության դադարեցման) հարցերին վերաբերող տեղեկությունները	Գաղտնի
158	Ծածկագրային ծառայության գործառույթ իրականացնող ծառայողների վերաբերյալ	Գաղտնի

159	Ծածկագրերի տեսակների և ծածկագրային ծառայությունների տեղակայման վայրը բացահայտող հսկողական, տեսչական աշխատանքների ընդհանրացված տեղեկությունների վերաբերյալ. ծածկագրերի տեսակները և ծածկագրային ծառայությունների տեղակայման վայրը չբացահայտող 160-րդ կետում նշված տեղեկությունները	Հույժ գաղտնի Գաղտնի
160	Հատուկ կարգավիճակ ունեցող վայրերում տեղակայված ծածկագրային ծառայությունների, տեղակայման վայրի և հատուկ կապի անվտանգության վիճակի վերաբերյալ	Հույժ գաղտնի
161	Պետական գաղտնիքի պահպանման և պաշտպանության կազմակերպման և դրա փաստացի վիճակի վերաբերյալ	Գաղտնի
162	Ահաբեկչության հակազդման և որոշակի անձանց նկատմամբ պետական պաշտպանության միջոցներ կիրառելու մեթոդների, եղանակների վերաբերյալ	Հույժ գաղտնի
163	Ահաբեկչության հետ հնարավոր առնչություն ունեցող անձանց և կազմակերպությունների նկատմամբ ֆինանսական մոնիտորինգի արդյունքների վերաբերյալ	Հույժ գաղտնի
164	Պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների պահպանության մեթոդների ու միջոցների վերաբերյալ	Գաղտնի
165	Պետական պահպանության ենթակա կառույցների անվտանգության ապահովման ուժերի, միջոցների, մեթոդների, ինչպես նաև դրանց գործունեության ֆինանսավորման մասին տվյալները, եթե դրանք կարող են բացահայտել թվարկված տեղեկությունները	Գաղտնի